ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ՝ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Անդրանիկ Թադևոսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Անդրանիկ Թադևոսյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 7-րդ՝ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:Նախագահի թեկնածու առաջադրվեց Կարինե Մարտիրոսյանը, որից հետո կատարվեց քվեարկություն, որի արդյունքում միաձայն նախագահ ընտրվեց Կարինե Մարտիրոսյանը:

Որոշեցին. - 7-րդ՝ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Կարինե Մարտիրոսյանը /նախագահ/
2. Արմինե Սարգսյան /անդամ/
3. Նելլի Բաղալյան /անդամ/
4. Անի Շահինյան /անդամ/
5. Լիանա Պողոսյան /անդամ/

2.Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Անդրանիկ Թադևոսյանը՝ նշելով, որ այս տարի նոր ուսումնական տարում սահմանվում է հնգօրյա աշխատանքային ռեժիմ, դասերը սկսվում են 9:00-ին և ավարտվում են 15: 00- ին : Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների ուսման հարցում, գրենական պիտույքների,

համազգեստների և հաճախումների նկատմամբ: Տեղեկացրեց նաև, որ 1-ին կիսամյակը բաղկացած է 15 շաբաթից:

Դասղեկ Անդրանիկ Թադևոսյանը նշեց, որ նախորդ տարի դասարանն ունեցել է բավականին շատ կարգապահական խնդիրներ, հաճախակի վնասել են դպրոցական գույքն ու բավականին խնդիրներ են առաջացել ուսուցիչների հետ: Ուստի խնդրեց ծնողներին, որ ուշադրության կենտրոնում պահեն նմանատիպ վարք դրսևորող աշակերտներին , համագործակցեն դասղեկի հետ, հաճախակի զրույցներ ունենան երեխաների հետ:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Կարինե Մարտիրոսյան

Քարտուղար՝ Արմինե Սարգսյան